Ռափայել Պատկանյան

Աղյուծի սթափումը

Այդ ծանրը լուծը մինչև ե՞րբ կրրեք
Դարավոր լուծը անգութ չար տաճկաց,
Ըստրրկի կյանքին մինչ ե՞րբ համբերեք
Ու ծանակ լինիք դուք օտար ազգաց:

Մինչև ե՞րբ ձեր սուրբ սեղան ու խորան
Գերեզմանք, մատրունք, սուրբ եկեղեցիք
Պիտ լինին քուրդի պիղծ ոտից կոխան,
Մինչ ե՞րբ ձեր վրա պիտ թքքնեն մարդիկ:

Մինչև ե՞րբ անմեղ, մաքուր հայ կույսեր,
Մինչև ե՞րբ պարկեշտ, ամոթխած կնանիք
Պիտ լրցնեն թուրքաց զազիր հարեմներ .
Այս նրվաստ կյանքը մինչ ե՞րբ պիտ տանիք:

Մինչ ե՞րբ վաստակիր արյուն-քրրտինքով
Ու անտանելի բեռի տակ թեքվիր,
Մինչև ե՞րբ լրլկե սոսկալի ձեզ սով,
Մինչ ե՞րբ կողոպտվիր, մինչ ե՞րբ կեղեքվիք:

Մինչև ե՞րբ պիտի պարզամիտ լինիք
Ու անասունեն օր անցնուք դուք վատ,
Մինչ ե՞րբ խոստմունքով դուք պիտի խաբվիք,

Չի մընաց ձեր մեջ ոչ հույս, ոչ հավատ:

Չի հասա՞վ ժամը, ժամը սոսկալի
Սոսկալի վըրիժու, արդար հատուցման,
Վերջին ժամ՝ ամեն հայի ցանկալի,
Կենաց ժամ և կամ ժամ ազնիվ մահվան:

Դե՛հ, ելե՛ք, հայեր, ոտքի կանգնեցե՛ք,
Ահա թըշնամին կա ձեր հանդիման,
Ջըլոտ ձեր բազկաց ուժը փորձեցեք,
Ինչպես սովրեցուց ձեզ Քաջըն-Վարդան:

Գիտեմ՝ զենք չունիք . բայց մի՛ սարսափիք,
Առե՛ք ինչ հանդեպ կա՝ կացին, խոփ, բահ,
Սուտ-պարծուկ և ոչ արի է տաճիկ,
Հուժկու ձեռքերով արե՛ք խեղդամահ:

Գիտեմ՝ անտեր եք, չունիք կարեկից,
Բայց մի՛ վըհատիք ու մի՛ սոսկացեք,
Սերն ազատության է ձեր զինակից,
Հուսով փըրկության քաջալերվեցե՛ք:

Ուր և կոխեք ոտք . մահ սերմանեցե՛ք,
Ցըմահ կըռվեցեք, հարե՛ք անխընա .
Գոռ դաշտեն մի՞թե երբեք լսած չեք,
Որ ստրուկն ազատ մարդ կըվերադառնա:

Ու գոռաց երկինք, գոռացին սարեր,
Հա՛, ծածանեցավ հայկական դրոշակ,
Արյամբ լըցվեցան հայրենյաց ձորեր
Շուտ ազատության է բարի գուշակ:

Ահա՛ ոսոխներն իրար դիպեցան

Վարձկան դահիճներն ու ազատ որեար . . .
Հա՛յ, քեզ լլկողին արա ցիր ու ցան
Հա՛յ, արագ շարժե մանգաղ ու տապար:

Հա՛յ-մարդ՝ պլաստիկ ճիգ, էլի պլաստիկ գրոհ,
Զարդ-բուրդ արա՛, մի՛ կորցնիլ հույս, հավատ,
Էլի՛ փոքր ինչ մահ, էլի՛ փոքր ինչ զոհ,
Եվ . . . սուրբ Հայաստան կրկանգնի ազատ: